

**Հ. Մ. Ը. Մ.**

**Արեւելեան Միացեալ Նահանգներու  
Շրջանի**



**Ներքին  
Ծրագիր – Կանոնագիր  
2022**

**Սոյն Կանոնագիրը բարեփոխուած է Հ.Մ.Ը.Մ.ի  
Արեւելեան Միացեալ Նահանգներու 43-րդ Շրջանային  
Ներկայացուցչական Ժողովին, գումարուած 8-10  
Նոյեմբեր 2019-ին Ֆիլատելֆիա, եւ 44-րդ Շրջանային  
Ներկայացուցչական Ժողովին, գումարուած 5-7  
Նոյեմբեր 2021-ին Նիւ Եորք: Կանոնագրի  
փոփոխութիւնները վաւերացուած են Հ.Մ.Ը.Մ.ի  
Կեդրոնական Վարչութեան կողմէ նամակ թիւ 450-ով,  
թուակիր 6 Յունիս 2022:**

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆՈՒՆ

Միության կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկաուտներ: Անգլերէնով HOMENETMEN.

## ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է՝

- ա) Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,
- բ) Սորվեցնել Միութեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասեր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,
- գ) Չարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,
- դ) Համակել անոնց միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով:

## ՄԻՋՈՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ը իր նպատակը կ'իրագործէ՝

- Ա. Սկաուտութեամբ,
- Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,
- Գ. Դասախօսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,
- Դ. Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով,
- Ե. Ակումբներով եւ մարզարաններով,
- Զ. Երիտասարդական բաժանմունքով (18-էն 30 տարեկան):

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

30Դ. 1 (ը.կ. 1).- 3.Մ.Ը.Մ.ին կրնայ անդամակցիլ ամեն հայ անհատ, առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան, երբ կ'ընդունի **Միութեան Ծրագիր-Կանոնագիրը** եւ կ'ենթարկուի անոր կանոններուն եւ որոշումներուն:

Ծանօթ.- (Ներքին կ.)

Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանի մէջ 3.Մ.Ը.Մ.ին կրնան անդամակցիլ նաեւ անհատներ որոնք.-

ա.- ծնողքէն մին 3այ է:

բ.- ամուսնացած են միութեան անդամի մը հետ:

30Դ. 2 (ը.կ. 2).- Միութեան անդամակցելու տրամադիր անհատը պետք է գրաւոր դիմում կատարէ 3.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը վարչութեան՝ ըստ իր շրջանի ներքին կանոնագրութեան: 18 տարեկանէն վեր դիմորդները պարտին ունենալ նուազագոյնը երկու տարուան անդամակցութիւն ունեցող երկու 3.Մ.Ը.Մ.ականներու երաշխաւորութիւնը:

Ծանօթ.- (Ներքին կ.) Անհատ մը պարտի դիմել իր բնակած վայրի մօտակայ 3.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան անդամակցելու: Իր բնակած վայրէն հեռակայ մասնաճիւղի դիմելու պարագային, Շրջանային Վարչութեան վաւերացումը անհրաժեշտ է նախքան անդամակցութեան դիմումը ընդունիլ:

30Դ. 3 (ը.կ. 3).- Թեկնածուն 3.Մ.Ը.Մ.ի անդամ կը դառնայ մասնաճիւղի վարչութեան համաձայնութեամբ:

30Դ. 4 (ը.կ. 4).- Իւրաքանչիւր անդամ կը կատարէ իր բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնները հանդէպ Միութեան:

30Դ. 5 (ը.կ. 5).- 3.Մ.Ը.Մ.ական մը չի կրնար մաս կազմել մարզական եւ սկաւտական այլ միութիւններու: Այլ խումբերու մասնակցութեան պարագան կը կարօտի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան հաւանութեան (ըստ շրջանի ներքին կանոնագրութեան):

30Դ. 6 (ը.կ. 6).- Շրջանէ շրջան, կամ մասնաճիւղէ մասնաճիւղ փոխադրուող անդամ մը պարտի ներկայացնել իր միութենական փոխանցագիրը:

Ա.- Մասնաճիւղէ մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի վարչութեան արտօսութեամբ, եւ Շրջանային վարչութեան վաւերացումով:

Բ.- Շրջանէ շրջան անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի վարչութեան արտօսութեամբ, Շրջանային Վարչութեան վաւերացումով, եւ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

30Դ. 7 (ը.կ. 7).- Անդամ մը չի կրնար միաժամանակ մաս կազմել ստորադաս եւ գերադաս մարմիններու կամ յանձնախումբերու:

## ԴՐՕՇԱԿՆԵՐ

ՅՕԴ. 8 (ը.կ. 8).- Զ.Մ.Ը.Մ.ի դրոշակն է.-



տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Զ.Մ.Ը.Մ.ի դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 9 (ը.կ. 9).- Զ.Մ.Ը.Մ.ի սկաւտտութեան դրոշակն է.-



տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Զ.Մ.Ը.Մ.ի սկաւտտութեան դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴ. 10 (ը.կ. 10).- Զ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ ժողովները՝

- Ա. Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով
- Բ. Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողով
- Գ. Շրջանային Ներկայացուցչական Ժողով
- Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով:

ՅՕԴ. 11 (ը.կ. 11).- Վերոյիշեալ ժողովներէն համապատասխան կարգով կը բխին հետեւեալ մարմինները՝

- Ա. Մասնաճիւղի Վարչութիւն
- Բ. Մեկուսի Շրջանի Վարչութիւն
- Գ. Շրջանային Վարչութիւն
- Դ. Կեդրոնական Վարչութիւն:

ՅՕԴ. 12 (ը.կ. 12).- Ժողովներու եւ վարչութիւններու որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ: Բացառութիւն կը կազմեն Կանոնագիրով նախատեսուած պարագաները (Տեսնել՝ ը.կ. Յօդ. 39Ա, ը.կ. Յօդ. 50-ի ծանօթը, ը.կ. Յօդ. 92 եւ ը.կ. Յօդ. 134):

ՅՕԴ. 13 (ը.կ. 13).- Վարչութիւն մը լուծուած կը համարուի, եթէ իր նստաշրջանի ընթացքին կորսնցնէ իր կազմի ընտրուած անդամներուն մեծամասնութիւնը: Նման պարագայի՝ վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել զինք ընտրող ժողովը՝ առ ի տնօրինութիւն:

## ՄԱՍՆԱԾԻՐ

ՅՕԴ. 14 (ը.կ. 14).- Նուագագոյնը 18 տարիքը բոլորած տասնհինգ անհատներ հաշուող խմբաւորում մը կրնայ կազմել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը: Նորաստեղծ մասնաճիւղը օրինական կը նկատուի, երբ կը ստանայ գերադաս վարչութեան վաւերացումը:

ՅՕԴ. 15 (ը.կ. 15).- Իւրաքանչիւր քաղաք կ'ունենայ միայն մէկ մասնաճիւղ: Անհրաժեշտութեան պարագային Շրջանային Վարչութեան արտօսութեամբ կարելի է ստեղծել մէկէ աւելի մասնաճիւղեր:

## ՄԱՍՆԱԾԻՐԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 16 (ը.կ. 16).- Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը (վարչութեան գործունեութեան բնարկում եւ ընտրութիւն) կը գումարուի տարին մէկ անգամ: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական Ընդհանուր Ժողովներ գումարել:

Ծանօթ. - (Ներքին կ.)

Ա. Մասնաճիւղի Անդամական Ժողովները կը զուգահիսի ներկայացուցչական Ընդհանուր Ժողովի հանգրուանին. Մասնաճիւղի Վարչութեան գործունեութեան բնարկումը կը կատարուի Շրջանային Ներկայացուցչական Ժողովէն առաջ իսկ ընտրութիւնը Շրջանային Ներկայացուցչական Ժողովէն ետք:

Բ. Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամներուն տեղեկացնել Անդամական Ընդհանուր Ժողովի օրակարգը:

Գ. Մասնաճիւղերը պարտին գումարումէն նուագագոյնը մէկ ամիս առաջ տեղեկ պահել Շրջանային Վարչութիւնը իրենց Անդամական Ընդհանուր Ժողովներուն գումարման մասին, նամակին կցելով ժողովի կապուած օրահարցերը:

ՅՕԴ. 17 (ը.կ. 17).- Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներուն իրաւասու ձայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները:

ՅՕԴ. 18 (ը.կ. 18).- Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

Ծանօթ.- Մեծամասնութիւն չգոյանալու պարագային Անդամական Ընդհանուր երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները տեղեկ պահել Անդամական Ընդհանուր Ժողովի գումարումէն եւ անհրաժեշտ պարագային՝ յետաձգումէն:

30Դ. 19 (ը.կ. 19).- Անդամական Ընդհանուր Ժողովը, որուն հաշուետու է մասնաճիւղին վարչութիւնը՝

Ա. Կը գնահատէ մասնաճիւղի վարչութեան տեղեկագրով ներկայացուած բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

Բ. Կու տայ որոշումներ եւ կ'ընէ թելադրանքներ մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

Գ. Կ'ընտրէ մասնաճիւղի վարչութիւն:

Դ. Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ կանոնագրի սահմանած թիւով ներկայացուցիչներ՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ ներկայացուցիչներ առանձին քուէարկութեամբ:

Ե. Կ'ընտրէ հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբ:

Ծանօթ. - (Ներքին կ.) Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը իրաւունք ունի ընտրելու յառաջիկայ տարեշրջանին հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերը:

2. (Ներքին կ.) Ներկայացուցիչները, պարտաւոր են, առ ի տեղեկութիւն, զեկուցելու ներկայացուցչական ժողովի որոշումները, Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին:

## ՇՐՋԱՆ

30Դ. 20 (ը.կ. 20).- Շրջան կը համարուի այն նահանգը կամ նահանգները, երկիրը կամ երկիրները, որոնք ունին առնուազն 3 մասնաճիւղեր, եւ որոնք միասնաբար կը հաշուեն նուազագոյնը 250 անդամ:

30Դ. 21 (ը.կ. 21).- Շրջանը կը գործէ Ներքին Կանոնագրութեամբ:

30Դ. 22 (ը.կ. 22).- Շրջանը կը ղեկավարուի Շրջանային Վարչութեամբ, ընտրուած Շրջանային Ներկայացուցչական ժողովէն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

30Դ. 23 (ը.կ. 23).- Այն շրջանը, ուր Շրջանային Վարչութիւն գոյութիւն չունի, կը կոչուի Մեկուսի Շրջան:

30Դ. 24 (ը.կ. 24).- Մեկուսի Շրջանը կը ղեկավարուի Մեկուսի Շրջանի Վարչութեամբ, ընտրուած Մեկուսի Շրջանի Անդամական ժողովէն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

30Դ. 25 (ը.կ. 25).- Մեկուսի Շրջանի Անդամական ժողովը Մեկուսի Շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի մէկ կամ երկու տարին անգամ մը:

Ծանօթ 1.- Մեկուսի Շրջանները, ժողովի թուականէն նուազագոյնը մէկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեկակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

Ծանօթ 2.- Մեկուսի շրջանը կը գումարէ յատուկ Անդամական ժողով այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութենէն կը ստանայ Պատգամաւորական ժողովի օրակարգը:

30Դ. 26 (ը.կ. 26).- Մեկուսի Անդամական ժողովը (վարչութեան գործունէութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի մէկ կամ երկու տարին անգամ մը: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական ժողովներ գումարել:

30Դ. 27 (ը.կ. 27).- Մեկուսի Անդամական Ժողովներուն իրաւասու ծայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը եւ Վարչութեան ներկայացուցիչը:

30Դ. 28 (ը.կ. 28).- Մեկուսի Անդամական Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ծայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

Ծանօթ.- Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները նախապէս տեղեակ պահել Անդամական Ժողովի գումարումէն եւ անհրաժեշտ պարագային յետաձգումէն:

30Դ. 29 (ը.կ. 29).- Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովը՝

Ա. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Վարչութեան գործունեութիւնը:

Բ. Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունեութեան ուղեգիծը:

Գ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:

Դ. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի Ներքին Կանոնագիրը:

Ե. Կը պատրաստէ Վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ անդամական ցեւըր:

2. Կ'ընտրէ Մեկուսի Վարչութիւն:

Ե. Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ Կանոնագիրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 1 փոխ պատգամաւոր առանձին թուարկութեամբ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

30Դ. 30 (ը.կ. 30).- Շրջանային ներկայացուցչական Ժողովը շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի երկու տարին անգամ մը:

Ծանօթ 1.- Շրջանները, ժողովի թուականէն նուազագոյնը մէկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

Ծանօթ 2.- Շրջանը կը գումարէ յատուկ Շրջանային ներկայացուցչական Ժողով, այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութեանէն կը ստանայ Պատգամաւորական Ժողովի օրակարգը:

Ծանօթ 3.- Շրջանային ներկայացուցչական Ժողովի մը, որուն քննելի օրակարգը ճշդուած է, չի կրնար ինքնիրեն իրաւունք տալ այլ օրակարգի մը քննութեան համար իր ժամանակը երկարաձգել:

30Դ. 31 (ը.կ. 31).- Շրջանային ներկայացուցչական Ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է մասնաճիւղերու պարզ մեծամասնութիւնը, եւ նաեւ ծայնի իրաւունք ունեցող ներկայացուցիչներու՝ պարզ մեծամասնութիւնը:

30Դ. 32 (ը.կ. 32).- Շրջանային ներկայացուցչական Ժողովին իրաւասու ծայնով կը մասնակցին՝

Ա. Մասնաճիւղերու ընտրուած ներկայացուցիչները:

Բ. Մասնաճիւղերու վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ:

Գ. Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը:

Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:



30Դ. 33 (ը.կ. 33).- Մասնաճիւղերու ընտրելի ներկայացուցիչներու թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով՝

Ա. Մինչեւ 25 անդամ ունեցող մասնաճիւղ մը՝	1 ներկայացուցիչ
Բ. 26-50 անդամ ունեցողը՝	2 ներկայացուցիչ
Գ. 51-75 անդամ ունեցողը՝	3 ներկայացուցիչ
Դ. 76-100 անդամ ունեցողը՝	4 ներկայացուցիչ
Ե. 101-150 անդամ ունեցողը՝	5 ներկայացուցիչ
Զ. 151-200 անդամ ունեցողը՝	6 ներկայացուցիչ
Է. 201-500 անդամ ունեցողը՝	7 ներկայացուցիչ
Ը. 501-800 անդամ ունեցողը՝	8 ներկայացուցիչ
Թ. 801-1200 անդամ ունեցողը՝	9 ներկայացուցիչ
Ժ. 1200էն ետք իւրաքանչիւր 500 անդամի՝	1 ներկայացուցիչ

30Դ. 34 (ը.կ. 34).- Մասնաճիւղի մը, Շրջանային ներկայացուցչական ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է Նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

30Դ. 35 (ը.կ. 35).- Շրջանային ներկայացուցչական ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

Ա. Շրջանային վարչութեան մնացեալ անդամները:

Բ. Շրջանային խորհուրդներէն եւ Շրջանային Յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:

Գ. Շրջանային ընդհանուր խմբապետ/խմբապետուհին:

Դ. Շրջանային խմբապետն ու խմբապետուհին:

30Դ. 36 (ը.կ. 36).- Շրջանային ներկայացուցչական ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ չորրորդ համեմատութեամբ: Հրաւիրեալներուն կէսը կ'ընտրուի Շրջանային ներկայացուցչական ժողովին կողմէ եւ մնացեալ կէսը կը հրաւիրուի Շրջանային վարչութեան կողմէ:

30Դ. 37 (ը.կ. 37).- Անհրաժեշտ պարագային, կրնայ արտակարգ Շրջանային ժողով գումարովի Կեդրոնական վարչութեան կամ Շրջանային վարչութեան հրաւերով եւ կամ մասնաճիւղերու վարչութիւններու առաջարկով:

Ծանօթ.- Վերջինի պարագային, երբ վարչութիւն մը պատճառաբանուած ձեւով արտակարգ Շրջանային ժողովի առաջարկ ներկայացնէ, Շրջանային վարչութիւնը պարտաւոր է այս առաջարկը փոխանցել միւս մասնաճիւղերու վարչութիւններուն՝ առնելու համար անոնց կարծիքը: Երբ մասնաճիւղերու վարչութիւններու 2/3 համեմատութիւնը համաձայն գտնուի առաջարկին, Շրջանային վարչութիւնը պարտի արտակարգ Շրջանային ներկայացուցչական ժողով գումարել:

30Դ. 38 (ը.կ. 38).- Շրջանային ներկայացուցչական ժողովը՝

Ա. Կը լսէ մասնաճիւղերու վարչութիւններու երկամեայ գործունեութեանց միացեալ եւ ամփոփ նիւթաբարոյական տեղեկագիրը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Շրջանային վարչութեան գործունեութիւնը:

Գ. Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունեութեան ուղեգիծը:

Դ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկա մնացած հարցերը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի ներքին Կանոնագիրը:

Զ. Կը պատրաստէ Շրջանային վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ մասնաճիւղերու ցեւըր:

Է. Կ'ընտրէ Շրջանային վարչութիւն:

Ը. Ի պահանջեալ հարկին՝ կ'ընտրէ Կանոնագրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ պատգամաւորներ առանձին բուժարկութեամբ:

Թ. (Ներքին կ.) Կ'ընտրել հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբ:  
Ծանօթ. - (Ներքին կ.) Շրջանային Ներկայացուցչական ժողովը իրաւունք ունի ընտրելու յառաջիկայ շրջանին հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերը:

ՅՕԴ. 39 (ը.կ. 39).- Ներքին Կանոնագրի վերաբերող Յօդուածներու՝

Ա. Քուէարկութիւնը կը կատարուի իրաւասու ձայներուն՝ ներկաներուն ձայներու երկու երրորդ մեծամասնութեամբ:

Բ. Բարեփոխութիւնները ի զօրու կը դառնան Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք միայն:

ՅՕԴ. 40 (ը.կ. 40).- Շրջանային Ներկայացուցչական ժողովը կրնայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Ներքին Կանոնագրին մէջ, պայմանով որ փոփոխութեան առաջարկները առնուազն մէկ ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր մասնաճիւղերուն եւ Անդամական Ընդհանուր ժողովներու քննութեան:

## ՊԱՏՊԱՄԱԲՈՐԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 41 (ը.կ. 41).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովը Հ.Ս.Ը.Մ.ի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են Հ.Ս.Ը.Մ.ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն: Կը գումարուի չորս տարին անգամ մը:

ՅՕԴ. 42 (ը.կ. 42).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

Ա. Շրջաններու ընտրուած պատգամաւորները (տեսնել ը.կ.Յօդ. 45),

Բ. Մեկուսի շրջաններու ընտրուած պատգամաւորները (տեսնել ը.կ.Յօդ. 45),

Գ. Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ,

Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

Ծանօթ.- Մեկուսի Շրջան մը եթէ հարիւրէ նուազ անդամ ունի կ'ունենայ մէկ ներկայացուցիչ, որ կ'ընտրուի անդամական ընդհանուր ժողովէն:

ՅՕԴ. 43 (ը.կ. 43).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

Ա. Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները,

Բ. Կեդրոնական Վարչութեան կողմէ բառամեայ շրջանի մը համար նշանակուած յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:

ՅՕԴ. 44 (ը.կ. 44).- Պատգամաւորական ընդհանուր ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդ համեմատութեամբ: Գրաւիրեալները կը նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ հիմնուելով շրջաններէ եւ մեկուսի շրջաններէ ներկայացուած առաջարկներուն վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու թիւին մէկ չորրորդը իր կողմէ նշանակել:

ՅՕԴ. 45 (ը.կ. 45).- Պատգամաւորական ընդհանուր ժողովին մասնակցող Պատգամաւորներու թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով՝

Ա. 100-250 անդամ 1 պատգամաւոր

Բ. 251-500 անդամ 2 պատգամաւոր

Գ. 501-750 անդամ 3 պատգամաւոր

Դ. 751-1000 անդամ 4 պատգամաւոր

Ե. Յաւելեալ իւրաքանչիւր հազար անդամի համար՝ մէկ պատգամաւոր: Վերջին 500 անդամէն աւելին կ'իյնայ հազարի իրաւունքին մէջ:

30Դ. 46 (ը.կ. 46).- Շրջանի մը Պատգամաւորական Ընդհանուր ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է Նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

30Դ. 47 (ը.կ. 47).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կը մասնակցին՝

Ա. Շրջանները իրենց շրջանի պատգամաւորներով, որոնք պարտին ունեալ լիազօրագիրներ՝ վաւերացուած զիրենք ընտրող ժողովին դիւանին կողմէ:

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեան Ներկայացուցիչը պարտի ունեալ լիազօրագիր, որ վաւերացուած ըլլայ համապատասխան վարչութեան դիւանին կողմէ:

30Դ. 48 (ը.կ. 48).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովին պատգամաւոր կրնայ ընտրուիլ առնուազն տասը տարի անընդմեջ 3.Մ.Ը.Մ.ի մաս կազմած անդամ մը:

30Դ. 49 (ը.կ. 49).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է Շրջաններու եւ իրաւասու ձայնով պատգամաւորներու պարզ մեծամասնութիւնը:

30Դ. 50 (ը.կ. 50).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովը՝

Ա. Կը լսէ Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեանց բառամեայ գործունեութեանց ամփոփ տեղեկագրերը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան բարոյական եւ Նիւթական գործունեութիւնը:

Գ. Կը ճշդէ Միութեան յառաջիկայ շրջանի ընդհանուր գործունեութեան ուղեգիծը:

Դ. Կը կազմէ Կեդրոնական Վարչութեան պիւտճէի Նախահաշիւը եւ կը կատարէ շրջաններու ցեղի բաշխումը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ 3.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը:

Չ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանի մը մեջ առկախ մնացած հարցերը:

Է. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն:

Ծանօթ.- Կանոնագիրի վերաբերեալ յօդուածներու քուէարկութիւնը կը կատարուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

30Դ. 51 (ը.կ. 51).- Պատգամաւորական Ընդհանուր ժողովը կրնայ հիմնական փոփոխութիւններ մտցնել 3.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրին մեջ, պայմանով, որ փոփոխութեան առաջարկները առնուազն վեց ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութիւններուն եւ ժողովներու քննութեան՝ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

30Դ. 52 (ը.կ. 52).- Բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ՝

Ա. Կեդրոնական Վարչութեան պահանջով,

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի առաջարկով:

Ծանօթ.- Երկրորդ պարագային, Շրջանային կամ Մեկուսի Շրջանի Վարչութիւն մը, Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու իր հիմնաւորեալ առաջարկը վաւերացնել տայլէ ետք Շրջանային Ներկայացուցչական կամ Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ, զայն կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան, որ իր կարգին՝ այս առաջարկը իր նկատողութիւններով կը յղէ Շրջաններուն եւ Մեկուսի Շրջաններուն առնելու համար անոնց տեսակետը այս մասին: Ունենալէ ետք բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի գրաւոր հաւանութիւնը՝ բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու մասին, Կեդրոնական Վարչութիւնը կը իրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի:

## ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

30Դ. 53 (ը.կ. 53).- Իւրաքանչիւր մասնաճիւղ կ'ունենայ իր մասնաճիւղի Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ, մէկ տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

30Դ. 54 (ը.կ. 54).- Մասնաճիւղի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

30Դ. 55 (ը.կ. 55).- Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Շրջանային Վարչութեան հաւանութեամբ:

30Դ. 56 (ը.կ. 56).- Մասնաճիւղի Վարչութեան կազմը կը վաւերացուի Շրջանային Վարչութեան կողմէ:

30Դ. 57 (ը.կ. 57).- Մասնաճիւղի Վարչութիւնը կը վարէ մասնաճիւղի մը միութենական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնադրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ու Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներու սահմանին մէջ:

30Դ. 58 (ը.կ. 58).- Մասնաճիւղի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ յանձնախումբերու եւ ժողովներու գործունէութեանց:

30Դ. 59 (ը.կ. 59).- Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունէութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, որուն առջեւ պատասխանատու է հաւաքաբար:

30Դ. 60 (ը.կ. 60).- Մասնաճիւղի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Շրջանային Վարչութեան կը դրկէ՝

Ա. Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ընդհանուր Ժողովին ատենագրութիւնները:

Բ. Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիր:

30Դ. 61 (ը.կ. 61).- Մասնաճիւղի Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Մասնաճիւղի Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Շրջանային Վարչութեան՝ առ ի տնօրինում:

30Դ. 62 (ը.կ. 62).- Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, որ կը պատրաստուի ու կը տրամադրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

30Դ. 63.- Մասնաճիւղի վարչութիւնն է պաշտօնական կապը իր անդամներուն, Արեւելեան Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն եւ իր գաղութին կամ նահանգին այլ կազմակերպութիւններուն միջեւ:

30Դ. 64.- Վարչութիւնը կը նշանակէ Սկաուտական խորհուրդը, որ կը վարէ մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը:

30Դ. 65.- Վարչութիւնը, մասնաճիւղի գործերու ղեկավարութեան դիւրացման համար, կը նշանակէ զանազան յանձնախումբեր իր անմիջական հսկողութեանը տակ եւ իր պատասխանատուութեամբ:

30Դ. 66.- Վարչութիւնը հաւաքաբար համարատու է մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին եւ Շրջանային Վարչութեան:

30Դ. 67.- Վարչութիւնը պարտաւոր է Շրջանային Վարչութեան վճառել Շրջանային Ներկայացուցչական Ժողովի կողմէ որոշուած տարեկան ցեւը:

30Դ. 68.- Վարչութիւնները պատասխանատու են Շրջանային Վարչութեան որոշումներուն եւ հրահանգներուն լրիւ գործադրութեան:

## **ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

30Դ. 69 (ը.կ. 63).- Իւրաքանչիւր Մեկուսի Շրջան կ'ունենայ իր Մեկուսի Շրջանի Վարչութիւնը բաղկացած 5, 7, 9, կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովին կողմէ, մէկ կամ երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

30Դ. 70 (ը.կ. 64).- Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Զ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

30Դ. 71 (ը.կ. 65).- Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

30Դ. 72 (ը.կ. 66).- Մեկուսի Շրջանի վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

30Դ. 73 (ը.կ. 67).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը վարէ իր շրջանի միութենական գործերը՝ ընդհանուր եւ ներքին կանոնագիրի տրամադրութեանց եւ Պատգամատրական Ընդհանուր ու Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովներու որոշումներու սահմանին մէջ:

30Դ. 74 (ը.կ. 68).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթական յանձնախումբերու եւ ժողովներու գործունեութեանց:

30Դ. 75 (ը.կ. 69).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունեութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովին, որուն պատասխանատու է հաւաքաբար:

30Դ. 76 (ը.կ. 70).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը ղրկէ՝

Ա.- Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ժողովին ատենագրութիւնները:

Բ.- Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունեութեան տեղեկագիր:

30Դ. 77 (ը.կ. 71).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, մակագիր թուղթն ու պահարանը:

30Դ. 78 (ը.կ. 72).- Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ մը պատժեցի արարքի մը համար, վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

30Դ. 79 (ը.կ. 73).- Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

30Դ. 80 (ը.կ. 74).- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը պարտաւոր է Կեդրոնական Վարչութեան վճարել Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ որոշուած ցեւը, ամէն տարի կանոնաւորաբար:

## **ՇՐՋԱՆԱԿԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

30Դ. 81 (ը.կ. 75).- Իւրաքանչիւր Շրջան կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ, երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

30Դ. 82 (ը.կ. 76).- Շրջանային Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ հինգ տարուան Զ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը երկու տարի մաս կազմած է մասնաճիւղի մը վարչութեան, շրջանային խորհուրդներու կամ յանձնախումբերու:

30Դ. 83 (ը.կ. 77).- Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Շրջանային Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

30Դ. 84 (ը.կ. 78).- Շրջանային Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար. ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

30Դ. 85 (ը.կ. 79).- Շրջանային Վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

30Դ. 86 (ը.կ. 80).- Շրջանային Վարչութիւնը կը վարէ շրջանի մը միութենական գործերը Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու որոշումներու սահմանին մէջ: Զետամուտ կ'ըլլայ կազմելու նոր մասնաճիւղեր:

30Դ. 87.- Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ Շրջանային Սկաուտական խորհուրդը, որ կը վարէ Շրջանի սկաուտական գործունեութիւնը:

30Դ. 88.- Շրջանային Վարչութիւնը, Շրջանի գործերու ղեկավարութեան դիւրացման համար, կը նշանակէ զանազան յանձնախումբեր:

30Դ. 89 (ը.կ. 81).- Շրջանային Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ մարմիններու յանձնախումբերու եւ ժողովներու գործունեութեանց:

30Դ. 90.- Շրջանային Վարչութիւնը պարտի Շրջանային Ներկայացուցչական ժողովներուն առնուած որոշումները եւ առաջարկները փոխանցել մասնաճիւղերուն:

30Դ. 91 (ը.կ. 82).- Շրջանային Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունեութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Շրջանային Ներկայացուցչական ժողովին, որուն պատասխանատու է հաւաքաբար:

30Դ. 92 (ը.կ. 83).- Շրջանային Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը դրկէ՝

Ա. Վարչական ժողովներու նիստերու եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովին ատենագրութիւնները:

Բ. Մասնաճիւղերուն յղած շրջաբերականները:

Գ. Իր շրջանի ասարտին նիւթաբարոյական գործունեութեան եւ շրջանի մասին տեղեկագիր:

30Դ. 93 (ը.կ. 84).- Շրջանային Վարչութիւնը իրաւասու է իր անունով լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու իր մասնաճիւղերու վարչութեանց նիւթական եւ բարոյական գործունեութիւնը քննելու, ներքին հարցերը լուծելու եւ ուղղութիւն տալու համար:

30Դ. 94 (ը.կ. 85).- Շրջանային Վարչութիւնը իրաւասու է մասնաճիւղի վարչական կազմ մը լուծելու նիւթական սայթաքումներու, անգործունեութեան, որոշում-հրահանգներու հանդէպ անտարբերութեան եւ մասնաճիւղի ներքին կեանքին մէջ ստեղծուած դժգոհութեանց պատճառով:

Նման պարագաներու, Շրջանային Վարչութիւնը անմիջապէս կը նշանակէ վարչական կազմ, որուն առաջնահերթ պարտականութիւնը կ'ըլլայ առաւելագոյնը մինչեւ երեք ամիս յառաջացնել մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով:

30Դ. 95 (ը.կ. 86).- Բացառիկ պարագաներու՝ Շրջանային Վարչութիւնը իրաւասու է նշանակովի վարչութիւն յառաջացնել մասնաճիւղի մը մէջ:

30Դ. 96 (ը.կ. 87) Շրջանային Վարչութիւնը կրնայ ոճէւ անդամ մը նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած մասնաճիւղի վարչութեան հետ խորհրդակցաբար:

30Դ. 97 (ը.կ. 88) - Շրջանային Վարչութիւն մը կրնայ գործավար ունենալ Շրջանային Ներկայացուցչական ժողովի որոշումով:

30Դ. 98 (ը.կ. 89).- Միայն Շրջանային Վարչութիւնը կրնայ իր շրջանին մէջ միջ-մասնաճիւղային ձեռնարկներ, հանդիպումներ եւ սկստուական բանակումներ կազմակերպել:

Պարագաներու բերումով այդ պարտականութիւնը կրնայ յանձնել մասնաճիւղի մը:

30Դ. 99 (ը.կ. 90).- Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկստուական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

30Դ. 100 (ը.կ. 91).- Շրջանային Վարչութիւնը պարտաւոր է Կեդրոնական Վարչութեան վճարել Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ որոշուած ցենզը, ամէն տարի կանոնաւորաբար:

30Դ. 101 (ը.կ. 92).- Շրջանային Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Շրջանային Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տօսրինում:

## **ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

30Դ. 102 (ը.կ. 93).- Զ.Մ.Ը.Մ.ի գործադիր գերագոյն մարմինն է Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

30Դ. 103 (ը.կ. 94).- Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ, գաղտնի բուեարկութեամբ եւ ծայնետու պարզ մեծամասնութեամբ: Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9, 11 կամ 13 անդամներ եւ կ'ընտրուի չորս տարուան համար:

30Դ. 104 (ը.կ. 95).- Կեդրոնական Վարչութիւնը իր կազմէն որեւէ պատճառով պակտող անդամին տեղ իր կազմը կ'ամբողջացնէ:

30Դ. 105 (ը.կ. 96).- Կեդրոնական Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար, ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

30Դ. 106 (ը.կ. 97).- Կեդրոնական Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ առնուազն 10 տարուան Զ.Մ.Ը.Մ.ական մը, որ շրջանի մը Շրջանային Վարչութեան անդամ կամ Շրջանային Վարչութեան մակարդակի յանձնախումբի մէջ եղած է կամ վարած՝ համապատասխան պաշտօն:

30Դ. 107 (ը.կ. 98).- Կեդրոնական Վարչութեան կը պատկանի Զ.Մ.Ը.Մ.ի Ծրագրի, կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը:

30Դ. 108 (ը.կ. 99).- Կեդրոնական Վարչութիւնը կը գործադրէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումները եւ կը հսկէ անոնց գործադրութեան՝ շրջաններէն ներս:

30Դ. 109 (ը.կ. 100).- Կեդրոնական Վարչութիւնը կը հսկէ, որ Շրջանային Ներկայացուցչական ժողովներու որոշումները եւ Շրջանային Վարչութեանց գործունեութիւնը չհակասեն Միութեան Ծրագրի-Կանոնագիրին եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի որոշումներուն:

30Դ. 110 (ը.կ. 101).- Շրջաններու պահանջով, կամ անհրաժեշտ պարագային իր որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը միութեան կանոններուն համար կրնայ ներկայացուցիչներ ղրկել շրջանները, որոշ պարտականութեամբ:

30Դ. 111 (ը.կ. 102).- Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է պահել ատենագրութեան, նամակագրութեան, շրջաբերականներու եւ հաշուական համապատասխան թղթածրարներ, զորս իր գործունեութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին եւ որուն պատասխանատու է հաւաքաբար:

30Դ. 112 (ը.կ. 103).- Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ կազմակերպել համա-Զ.Մ.Ը.Մ.ական հանդիպումներ, սկաուտական բանակումներ եւ մարզական խաղեր, հաւաքատեղիի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան գործակցութեամբ:



307. 113 (ը.կ. 104).- Կեդրոնական Վարչութիւնը կրնայ ուել անդամ մը նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մեջ՝ ենթակային պատկանած Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան հետ խորհրդակցաբար:

307. 114 (ը.կ. 105).- Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեակի աւարտին կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, որուն գումարումի թուականէն չորս ամիս առաջ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն կը ղրկէ Ժողովի օրակարգը:

307. 115 (ը.կ. 106).- Բացառիկ պարագաներու՝ Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է լուծելու Շրջանի Վարչական կազմ եւ անոր տեղ խորը նշանակելու:

Նշանակուած վարչութիւնը մինչեւ վեց ամիս պարտաւոր է հրաւիրելու Շրջանային Ներկայացուցչական կամ Անդամական Ընդհանուր Ժողով, ընտրելու համար խոր վարչութիւն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

307. 116 (ը.կ. 107).- Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ կ'ունենան իրենց ներքին կանոնագիրը, համաձայն շրջանի պայմաններուն, հաստատուած համապատասխան ժողովներու ընթացքին, եւ վաւերացուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

307. 117 (ը.կ. 108).- 3.Մ.Ը.Մ.ը ունի իր «**Ծառայութեան**» եւ «**Արժանեաց**» շքանշաններ, ինչպէս նաեւ՝ «**Արտակարգ**» պատուանշանը, որոնք ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները:

307. 118 (ը.կ. 109).- 3.Մ.Ը.Մ.ի մարզիկները իրենց մարզական բոլոր տարազներուն վրայ պարտին կրել 3.Մ.Ը.Մ.ի **Վահանը**՝ զետեղուած ձախ կուռծքին վրայ:

307. 119 (ը.կ. 110).- Վարչական մը 3.Մ.Ը.Մ.ին կատարած աշխատանքներուն համար չի կրնար նիւթական վարձատրութիւն ստանալ մինչեւ պաշտօնավարութեան աւարտը, այլպէս ան կը դադրի իր հանգամանքէն:

307. 120 (ը.կ. 111).- Այս Կանոնագրութեան եւ կազմակերպական կանոններու մեկնաբանութեան իրաւունքը կը պատկանի 3.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

307. 121 (ը.կ. 112).- Շրջաններու ներքին Կանոնագրութիւնը մեկնաբանելու իրաւունքը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

307. 122 (ը.կ. 113).- Այս կանոնագրութեան վերաբերեալ որեւէ փոփոխութիւն կատարելու իրաւունքը կը պատկանի 3.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

## ԸՆՏՐԱԿԱՆ

307. 123 (ը.կ. 114).- Տասնութ տարիքը լրացուցած եւ առնուազն վեց ամիս 3.Մ.Ը.Մ.ի շարքերուն անդամակցած բոլոր 3.Մ.Ը.Մ.ականները իրաւունք ունին քուէարկելու:

307. 124 (ը.կ. 115).- Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէարկութեամբ:

Քուէներու ընդհանուր թիւէն կը գեղչուին ճերմակ քուէները եւ մնացեալին կէսէն աւելին ստացողը ընտրուած կը համարուի, պայմանաւ որ ճերմակ քուէներուն թիւը ընտրելու իրաւունք ունեցողներու թիւի կէսէն աւելի չըլլայ:

## ՆԻԻԹԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐ

30Դ. 125 (ը.կ. 116).- Միութեան հասոյթի միջոցներն են. անդամավճարներ, մուտքի տուրքեր, միութեանական հանդէսներէ եւ մրցումներէ գոյացած գումարներ, նուէրներ, հանգանակութիւններ, կտակներ եւ մնայուն հասոյթի աղբիւրներ:

30Դ. 126 (ը.կ. 117).- Վարչութեան մը արտօսուած չէ Միութեան գանձը առևտրական շահարկումի ենթարկել: Բացառութիւն կարելի է կատարել գերադաս վարչութեան եւ գերադաս ժողովի հաւանութեամբ:

30Դ. 127 (ը.կ. 118).- Մասնաճիւղ մը բոյր մասնաճիւղի մը սահմանին մէջ որեւէ հասութեաբեր ձեռնարկի համար պարտաւոր է Շրջանային Վարչութեան եւ տեղական վարչութեան հաւանութիւնը առնել:

30Դ. 128 (ը.կ. 119).- Վարչութիւնները Միութենէն դուրս որեւէ ձեռնարկի չեն կրնար յատկացումներ ընել իրենց գանձէն: Բացառիկ պարագաներու գերադաս մարմինի հաւանութիւնը ստանալը անհրաժեշտ է:

30Դ. 129 (ը.կ. 120).- Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն որեւէ փոխատուութիւն ընել ուրեւ անհատի (անդամ կամ ոչ), ինչպէս նաեւ որեւէ կազմակերպութեան: Այլ տեսակի փոխատուութիւններ կը կարօտին գերադաս վարչութիւններու հաւանութեան:

30Դ. 130 (ը.կ. 121).- Վարչութիւնները փոխառութիւն կրնան ընել եւ կամ կարուածներ գրաւի տակ կրնան դնել միայն գերադաս մարմինի հաւանութեամբ:

## ՀԱՇՈՒԿԱՆ

30Դ. 131 (ը.կ. 122).- Ամէն մարմին պարտաւոր է ստացած գումարին համար տալ համապատասխան կնքուած ընկալագիր՝ գանձապահին ստորագրութեամբ:

30Դ. 132 (ը.կ. 123).- Բոլոր վարչութիւնները պարտաւոր են իրենց հաշիւները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահութեամբ:

30Դ. 133 (ը.կ. 124).- Արգիլուած է որեւէ հիմնադրամ գործածել տարբեր նպատակի:

30Դ. 134.- Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանի Շրջանային Վարչութիւնը եւ մասնաճիւղերու Վարչութիւնները պարտին կատարեալ ձեռով արձանագրել տուրքերն եւ օրինական փաստաթուղթերը նահանգային եւ պետական պատկան մարմիններուն հետ:

30Դ. 135.- Շրջանային Ներկայացուցչական ժողովի կամ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովներու կողմէ ընտրուած Հաշուեթննիչ յանձնախումբերը՝

Ա. Կ'ընտրուին, ձեռամբարց քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Բ. Կը բաղկանան երեք Հ.Մ.Ը.Մ.ականներէ:

Գ. Կը քննեն եւ կը հաստատեն վարչութիւններուն հաշուական բոլոր տոմարներու ճշգրտութիւնը եւ կը պատրաստեն յաջորդ շրջանի նախահաշիւը:

Դ. Պարտին տարեկան առնուազն երկու անգամ քննել վարչութիւններուն հաշուական բոլոր տոմարները:

Ե. Կը գործեն համապատասխան վարչութեան գործունեութեան ժամանաշրջանի տեղողութեամբ:

2. Հաշուեքննիչ Յանձնախումբը պարտի տեղեակ պահել համապատասխան ժողովներուն, եթէ կազմակերպութիւնը իր բոլոր տուրքերն ու օրինական փաստաթուղթերը ներկայացուցած է Նահանգային եւ պետական պատկան մարմիններուն:

## ՄԱՐԶԱԿԱՆ

ՅՕԴ. 136 (ը.կ. 125).- Մարզական խաղերը կ'ունենան իրենց յատուկ Ներքին Կանոնագրութիւնը, որ պետք է վաւերացուած ըլլայ համապատասխան Վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 137.- Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանի մասնաճիւղերու մարզական խումբերը, կը կազմուին միայն Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներով: Արգիւրած է ոչ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու մասնակցութիւնը մասնաճիւղերու մարզական խումբերուն:

## ԳՈՅՔԵՐ ԵՒ ԿԱՆՈՒԱԾՆԵՐ

ՅՕԴ. 138 (ը.կ. 126).- Իւրաքանչիւր Վարչութիւն պարտաւոր է ունենալ գոյքերու կանոնաւոր տոմար, ուր թուագրեալ Նշանակուած պետք է ըլլան մասնաճիւղի գոյքերը, համապատասխան մանրամասնութիւններով:

ՅՕԴ. 139 (ը.կ. 127).- Իւրաքանչիւր շրջանի անշարժ կալուածները (դաշտ, մարգարան, ակումբ, եւայլն), Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, պետութեան մօտ կ'արձանագրուին Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի անունով: Բացառիկ պարագաներու կը յանձնուին Կեդրոնական Վարչութեան կարգադրութեան:

ՅՕԴ. 140 (ը.կ. 128).- Կալուածները կրնան ծախուիլ համապատասխան ժողովներու որոշումով եւ գերադաս Վարչութիւններու վաւերացումով:

ՅՕԴ. 141 (ը.կ. 129).- Մասնաճիւղ մը լուծուելու պարագային՝ անշարժ եւ շարժուն կալուածները եւ իրաւունքները կը փոխանցուին համապատասխան գերադաս Վարչութեան:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ՅՕԴ. 142 (ը.կ. 130).- Հակակարգապահական արարքի մէջ կը նկատուի անդամ մը երբ՝

Ա. Կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովներու որոշումներուն դէմ կը մեղակնէ:

Բ. Շրջանային Վարչութեան կամ Մասնաճիւղի Վարչութեան որոշումներուն չ'ենթարկուի:

Գ. Անդամատուրք չի վճարեր:

Դ. Ժողովներէ կը բացակայի:

Ե. Մարմիններու պաշտօնավարութեան շրջանին, անոնց դէմ պայթար կը մղէ:

2. Հարցի մը, հակականոնագրային ձեւով ընթացք տալու համար, հանրագրութիւններ կը կազմէ:

Ե. Գոյք կամ դրամ կ'իւրացնէ:

Ը. Ընկերային ցանցերու մէջ կամ հրապարակային կերպով յայտարարութիւններ կը կատարէ մարմիններու եւ ժողովներու դէմ:

Ծանօթ՝ Քննադատութիւնները թոյլատրելի են միայն իրաւասու ժողովներու մէջ:

30Դ. 143 (ը.կ. 131).- Միութեան պատիժներն են՝  
Ա. Նկատողութիւն, դիտողութիւն  
Բ. Յանդիմանութիւն  
Գ. Քուէարկելու իրաւունքէ զրկում  
Դ. Ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէ զրկում  
Ե. Կախակայում  
Զ. Դեռացում  
Է. Արտաքսում:

30Դ. 144 (ը.կ. 132).- Կարգապահական տեսակետով ամէն անդամ պատասխանատու է այն Կարչութեան, որուն իրաւասութեանց դէմ յանցանք գործած է:

30Դ. 145 (ը.կ. 133).- Մարմիններն ու ժողովները, իրենց ենթակայ անդամներուն մասին կարգապահական պատիժներ տնօրինելու պարագային, պարտաւոր են պաշտպանուելու հնարաւորութիւն տալ ենթակային:

30Դ. 146 (ը.կ. 134).- Պատժական ամէն որոշում կը տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

30Դ. 147 (ը.կ. 135).- Մարմիններու եւ ժողովներու պատժական որոշումները վերջնական են, եթէ բողոք չկայ անոնց դէմ: Բողոքել կարելի է անմիջականօրէն գերագաս Կարչութեան: Բողոքառու ժողովներու եւ մարմիններու որոշումները վերջնական են:

Ծանօթ՝

Ա. Դատավճիռի մը դէմ բողոքողը կը զրկուի իր դատը գերագաս ժողովին եւ կամ մարմինն ներկայացնելու իրաւունքէն, եթէ իր բողոքը հրապարակուած է մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ:

Բ. Բողոքը գրաւոր կը ներկայացուի պատիժ որոշող մարմնին կամ ժողովին միջոցով:

Գ. Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

30Դ. 148 (ը.կ. 136).- Կարգապահական պատիժներու դէմ բողոքել կարելի է մինչեւ երկու ամիս, հաշուելով որոշումը հաղորդուած թուականէն: Բողոքառու մարմինը կամ ժողովը հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեսանի:

30Դ. 149 (ը.կ. 137).- Բ.Ս.Ը.Մ.էն հեռացման որոշում կը տրուի Շրջանային Կարչութեան կողմէ, եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Կարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

30Դ. 150 (ը.կ. 138).- Բ.Ս.Ը.Մ.էն արտաքսման որոշում կը տրուի եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Կարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

30Դ. 151 (ը.կ. 139).- Ժողովներէ յաճախ բացակայող անդամ մը կը ստանայ Նկատողութիւն, իսկ կրկնութեանց պարագային՝ յանդիմանութիւն:

30Դ. 152 (ը.կ. 140).- Մէկ տարի անդամատուրք չվճարող անդամ մը կը զրկուի ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէն: Յաջորդական երեք տարիներ անդամատուրք չվճարող անդամ մը դադրած կը նկատուի Միութեան շարքերէն:

30Դ. 153 (ը.կ. 141).- Կազմակերպական կանոններու դեմ մեղանշողները, վարչական կարգադրութեանց դեմ անսաստողները, հակաօրինական կերպով քննադատողները, հանրագրութիւն կազմողները՝ մարմինին կամ ժողովներու կողմէ կը կախակայուին:

Ծանօթ՝

Ա. Կախակայուած անդամ մը ժամանակաւոր կերպով կը դադրի Միութեան անդամ ըլլալէ, չի կրնար մաս կազմել մարմինի մը եւ մասնակցիլ Ընդհանուր ժողովներու:

Բ. Կախակայումը առաւելագոյն մէկ տարուան շրջանի համար կ'ըլլայ:

Գ. Կախակայման շրջանը լրանալուն՝ ենթական կը վերստանայ Միութեան անդամի բոլոր իրաւունքները:

30Դ. 154 (ը.կ. 142).- Կախակայուած անդամներ զերծ չեն կացուցուիր իրենց նիւթական պարտաւորութիւններէն:

30Դ. 155 (ը.կ. 143).- Միութեան գաղափարական ուղղութեան դեմ գործողները, կարգապահական յանցանքներու համար յաճախակի պատիժ ստացողները, Միութեան գոյքը եւ դրամը իւրացնողները Միութենէն կը հեռացուին, իսկ ծայրայեղ պարագաներու կ'արտաքսուին:

Ծանօթ՝ Զեռացուած անդամ մը հեռացման թուականէն երկու տարի յետոյ կրնայ գրաւոր դիմում կատարել զինք հեռացնող մարմինին կամ ժողովին: Վերընդունման իրաւունքը կը պատկանի հեռացման որոշումը տնօրինող մարմինին կամ ժողովին:

# **Ժողովական և Վարչական Կանոններ**

Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կեանքին սիրտը կը կազմեն ժողովները և վարչությունները: Անոնք է, որ մղում կու տան Միության գործունեությանը՝ կը գծեն ուղեգիծեր, կ'ընտրեն պատասխանատուներ, կ'առնեն գործադրելի որոշումներ:

Անհրաժեշտ է, որ ժողովները և վարչությունները իրենց ժողովական աշխատանքները տանին կանոնաւոր կերպով և վարանումներ, թիւրիմացութիւններ, անհատական սխալ մեկնաբանութիւններ չստեղծեն դժուարութիւններ և չդանդաղեցնեն այդ աշխատանքները, մոռցնել տալով հիմնականը՝ գործը:

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Կանոնագրութիւնը և Ներքին Կանոնագրութիւնները սահմանած են ժողովներու և վարչություններու իրաւասութիւններն ու պարտականութիւնները և ճշդած՝ անոնց յարաբերութիւնները:

Անսպասելի է սակայն, որ ժողովական գործնական կեանքին վերաբերող ամեն տրամադրութիւն տեղ գտած ըլլայ կանոնագրութիւններուն մէջ: Ժողովական ընդհանուր ըմբռնումները և միութենական աւանդութիւնները կը կազմեն անգիր կանոններ, որոնք, կանոնագրութիւններուն կողքին՝ կը պայմանաւորեն ժողովներու և վարչություններու ժողովական կեանքը:

Յետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին հաստատումը, ժողովական տարբեր ըմբռնում ունեցող երկիրներու մէջ նոր մասնաճիւղերու հիմնումը, ինչպէս նաեւ տեղ-տեղ ժողովական աւանդութիւններու տկարացումը անհրաժեշտութիւն դարձուցին ժողովական և վարչական կանոններու մշակումը:

Ժողովական և վարչական կանոնները կոչուած են ուղեցոյց ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ի ժողովներուն և վարչություններուն՝ կանոնաւորելու համար իրենց ժողովական կեանքը:

## Ա.- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### Ժողովի Բացում - Առժամայ Դիւան

30Դ. 156 (ը.կ. 246).- Ժողովին բացումը կը կատարէ ժողովը հրաւիրած վարչութեան Ներկայացուցիչը, որ կը ձեռնարկէ նաեւ առժամայ դիւանի ընտրութեան:

Ծանօթ՝ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովի պարագային անհրաժեշտ չէ առժամայ դիւանի կազմութիւնը:

30Դ. 157 (ը.կ. 247).- Առժամայ դիւանը կ'ունենայ ատենապետ մը եւ ատենադիր մը, որոնք կ'ընտրուին առանձին-առանձին, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաջին քուէարկութեան երբ պարզ մեծամասնութիւն չէ գոյացած, երկրորդ քուէարկութեան երբ պարզ մեծամասնութիւն չէ գոյացած, երկրորդ քուէարկութեան առաւելագոյն քուէ ստացողը ընտրուած կը նկատուի:

Ծանօթ՝ Առժամայ եւ մնայուն դիւաններուն մաս չեն կրնար կազմել խորհրդակցական ձայնով հրաւիրուած ժողովականները, ժողովի հրաւիրած վարչութեան եւ գերադաս վարչութիւններուն Ներկայացուցիչներն ու անդամները:

30Դ. 158 (ը.կ. 248).- Մասնաճիւղի եւ մեկուսի շրջանի վարչութիւններու դիւանները կը վարեն մասնաճիւղի եւ մեկուսի շրջանի այն Անդամական Ընդհանուր Ժողովները, որոնց օրակարգին վրայ չեն գտնուիր վարչութեան հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն. ինչպէս նաեւ Ներկայացուցիչներու կամ պատգամաւորներու ընտրութիւն: Դետեւաբար՝ առժամայ եւ մնայուն դիւաններու ընտրութիւն տեղի չունենար:

Շրջանային Ներկայացուցչական ժողովին եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը ձեռնարկուի առժամայ եւ մնայուն դիւաններու ընտրութեան, ինչ ալ ըլլայ օրակարգը:

### Լիազօրագիրներու Ստուգում

30Դ. 159 (ը.կ. 249).- Շրջանային Ներկայացուցչական ժողովին մասնակցող մասնաճիւղերու Ներկայացուցիչները, Պատգամաւորական Ընդհանուր ժողովին մասնակցող Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու պատգամաւորները պարտին ի ձեռին ունենալ զիրենք ընտրած ժողովներու դիւաններուն կողմէ տրուած լիազօրագիրներ:

Վարչութիւններու Ներկայացուցիչները իրենց լիազօրագիրները կը ստանան իրենց վարչութիւններէն:

30Դ. 160 (ը.կ. 250).- Առժամայ դիւանը կը կատարէ լիազօրագիրներու ստուգումը, ի հարկին լսելով լիազօրագիր Ներկայացնող ժողովականին կամ ժողովի հրաւիրած վարչութեան բացատրութիւնները, հաստատումները առարկութիւնները: Առժամայ դիւանը լիազօրագիրներու ստուգումի աշխատանքին արդիւնքը կը գէկուցէ ժողովին:

Ծանօթ՝ ժողովը կրնայ լիազօրագիրներու ստուգումը յանձնել իր կողմէ ընտրուած յանձնախումբի մը, որ իր աշխատանքին արդիւնքը կը գէկուցէ առժամայ դիւանին գլխաւորութեամբ գումարուող ժողովին:

30Դ. 161 (ը.կ. 251).- Ժողովականի մը լիազօրագիրին, մասնաճիւղի կը կամ շրջանի մը մասնակցութեան շուրջ ծագած հարցերուն յստակացումը կը կատարէ մնայուն դիւանով գումարուող ժողովը, իր առաջին նիստին:

## Մնայուն դիան

307. 162 (ը.կ. 252).- Լիազորագիրներու ստուգումէն ետք, առժամեայ դիանը կը ձեռնարկէ մնայուն դիանի ընտրութեան:

307. 163 (ը.կ. 253).- Մնայուն դիանը կ'ունենայ՝

ա.- Մասնաճիւղի կամ մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովներուն՝ ատենապետ մը եւ մէկ կամ երկու ատենադպիր:

բ.- Շրջանային Ներկայացուցչական եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն՝ երկու ատենապետ եւ երկու կամ չորս ատենադպիր:

307. 164 (ը.կ. 254).- Մնայուն դիանի ընտրութիւնը կը կատարուի ձեռամբարձ կամ գաղտնի քուէարկութեամբ, ըստ ժողովի կամքին եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

307. 165 (ը.կ. 255).- Մնայուն դիանը՝

ա.- Պաշտօնապետ կը հաստատէ ժողովին օրինակութիւնը, ժողովին վճիռին ենթարկելէ ետք ժողովականներու եւ շրջաններու մասնակցութեան հարցերու լուծումը:

բ.- Կը ձեռնարկէ խորհրդակցական ձայնով հրաւիրելի ժողովականներու ընտրութեան, ձեռամբարձ քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

գ.- Կը ձեռնարկէ հետեւեալ յանձնախումբերու ընտրութեան՝

- Յարաբերական-արխիւային,
- Հաշուեքննիչ-նախահաշիւ,
- Բանաձեւի,
- Աշխատանքային յանձնախումբեր,
- Քուէաթոյգ,
- Դատական (եթէ դատական հարց կայ):

Ծանօթ՝

ա.- Խորհրդակցական ձայնով ժողովականները յանձնախումբերու անդամ կրնան ընտրուիլ, բայց ոչ՝ ժողովի հրաւիրուած եւ գերադաս վարչութիւններու անդամները, ոչ ալ՝ վարչութեան ենթակայ յանձնախումբերու եւ խորհուրդներու ներկայացուցիչները:

բ.- Յանձնախումբը կը բաղկանայ 3 կամ 5 հոգիէ, ըստ ժողովի կամքին:

գ.- Յանձնախումբի անդամներու ընտրութիւնը կը կատարուի մէկ առ մէկ, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաւելագոյն քուէ ստացողները ընտրուած կը նկատուին:

## Յանձնախումբեր

307. 166 (ը.կ. 256).- Յարաբերական-արխիւային յանձնախումբը կը քննէ հաշուետու վարչութեան թղթածրարները (ատենագրութիւն, նամակագրութիւն, շրջաբերական, անդամներու եւ գոյքերու ցանկերը) եւ ժողովին կը ներկայացնէ գրաւոր զեկոյց՝ թղթածրարներու վիճակին ու պահպանման եղանակին, ինչպէս նաեւ՝ վարչութեան տարած յարաբերական եւ գործելակերպին մասին:

307. 167 (ը.կ. 257).- Հաշուեքննիչ-նախահաշիւ յանձնախումբը կը քննէ հաշուետու վարչութեան հաշիւները, նկատի առնելով որդեգրուած հաշուակահական դրութիւնը, կը բաղդատէ քուէարկուած եւ իրականացած պիւտճէները եւ գրաւոր զեկուցում կը ներկայացնէ անոնց մասին:

Յանձնախումբը կը պատրաստէ նաեւ յաջորդ շրջանի պիւտճէ, նկատի ունենալով ժողովի այն որոշումները, առաջարկները եւ թելադրանքները, որոնք նիւթականի կարիք ունին:



30Դ. 168 (ը.կ. 258).- Բանաձեռի յանձնախումբը կը խմբագրե հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ քուէարկելի գնահատումի բանաձեռը, նկատի ունենալով անոր ներկայացուցած տեղեկագիրները, անոնց շուրջ եղած հարցումներն ու լուսաբանութիւնները եւ գնահատական ու քննադատական արայայտութիւնները: Գնահատումի արժեչափերն են.-

**Անբաւարար, բաւարար, գոհացուցիչ, գնահատելի, յոյժ գնահատելի:**

Յանձնախումբը կը բանաձեռէ նաեւ ներկայացուած առաջարկները, նկատի ունենալով թեր ու դէմ կարծիքները:

30Դ. 169 (ը.կ. 259).- Քուէախոյզ յանձնախումբը, գաղտնի քուէարկութեան միջոցին, կը կատարե քուէաթուղթերու բաժանումը, հաւաքումը, ընթերցումը եւ արդիւնքներու արձանագրումը, դիւանին հսկողութեամբ:

30Դ. 170 (ը.կ. 260).- Դատական յանձնախումբը կը քննէ դատական հարցերը, նկատի ունենալով թղթածրարները եւ ի պահանջեալ հարկին լսելով կողմերուն լուսաբանութիւններն ու բացատրութիւնները:

Յանօթ՝ Դատական հարց կը նկատուին պատիժի մը դէմ բողոքը, պատիժի մը ներման կամ զայն բաւ համարելու դիմումները, որոնք ժողովին կ'ուղղուին պատժուած անդամին կամ պատժուած վարչութեան կողմէ միայն:

Ժողովին դիւանը կը ճշդէ դիմումին օրինաւորութիւնը՝ նկատի ունենալով կանոնագրային տրամադրութիւնները եւ ըստ այնմ դիմումին ընթացք կու տայ կամ կը մերժէ ընթացք տալ եւ այս մասին կը զեկուցէ ժողովին: Ժողովին կը պատկանի դիմումի մը շուրջ ծագած հարցին լուծումը:

Դիւանը դատական յանձնախումբին կը փոխանցէ դատական բոլոր հարցերը՝ իրենց թղթածրարներով:

## **Ժողովի Դիւանի Պարտաւորութիւնները**

30Դ. 171 (ը.կ. 261).- Ատենապետը՝

ա.- Կը բանայ եւ կը վարէ նիստերը:

բ.- Ձայն կու տայ ժողովականներուն:

գ.- Զարգերու քննութեան ընթացքին պարբերաբար կ'ամփոփէ արտայայտուած միտքերը, առանց իր կողմէ որեւէ արժեւորում կատարելու:

դ.- Զարցի մը քուէարկութեան հանգրուանին՝ բանաձեռուած առաջարկը կամ առաջարկները յստակ կերպով կը ներկայացնէ ժողովականներուն, սկսելով առաջին առաջարկէն:

ե.- Քուէարկութեան հանգրուանին ծայն չի կրնար տալ յանձնախումբին լուսաբանութիւններու կամ նոր առաջարկներու համար:

զ.- Կը կատարէ ձեռամբարձ քուէներու ստուգումը, դիւանի միւս անդամներուն օժանդակութեամբ:

է.- Զարգի մը մասին ժողովականի իր կարծիքը յայտնելու կամ առաջարկ մը ներկայացնելու համար, ատենապետութիւնը կը յանձնէ միւս ատենապետին, իսկ չզոյրութեան պարագային՝ ատենադպիրին:

ը.- Կը հսկէ ժողովի կանոնաւոր ընթացքին, նկատի ունենալով ժողովականներու արտայայտութիւններու պատշաճութիւնը, նիւթէն շեղումները, կրկնութիւնները եւ ի պահանջեալ հարկին կարգի կը իրաւորէ զանոնք:

թ.- Գաղտնի կը պահանջէ բացակայող կամ ուշացող ժողովականներէն եւ կամ նախապէս արտօնութիւն կու տայ անոնց՝ բացակայելու, ուշանալու կամ ժողովասրահէն դուրս գալու:

ժ.- Կը փակէ նիստերը:

307. 172 (ը.կ. 262).- Ատենադպիրները՝

ա.- Իւրաքանչիւր նիստին կը պահէն ներկայ-բացականերու տոմարը:

բ.- Կարգով կ'արձանագրեն ծայն ուզող ժողովականներուն անունները եւ նոյն կարգով զանոնք կը փոխանցեն ատենապետին:

գ.- Կը պահեն նիստերու ատենագրութիւնները՝ արձանագրելով նիստերու կարգաթիւը, գումարման թուականը, ժամն ու վայրը, ներկաներուն, բանաւոր բացականերուն, բացականերուն թիւը, ժողովը վարող դիւանի անդամներուն անունները: Կ'արձանագրեն նաեւ ժողովականներու արտայայտած միտքերը, թեր ու դէմ կարծիքները, առաջարկները, ի պահանջեալ հարկին՝ անոնց անուններով, քուէարկուած որոշումները՝ իրենց արդիւնքներով, այսինքն՝ թեր ու դէմ եւ ձեռնպահ քուէներուն թիւը:

դ.- Յաջորդ նիստին կը կարգան նախորդ նիստին ատենագրութիւնը:

307. 173 (ը.կ. 263).- Ժողովի վերջին նիստին ատենագրութիւնը կարելի չէ յետաձգել յաջորդ վարչութեան շրջանի աւարտին գումարուող ժողովին:

Վերջին նիստի ատենագրութեան վաւերացման համար ժողովը կ'որդէգրէ հետեւեալ ձեւերէն մէկը, ըստ յարմարութեան՝

ա.- Ժողովի աւարտին դիւանը նիստի կը հրաւիրէ ժողովը՝ ատենագրութեան վաւերացման միակ օրակարգով, միայն ներկայ ժողովականներով:

բ.- Ժողովի աւարտին դիւանը կը ներկայացնէ վերջին նիստի սեւագրութիւնը՝ առ ի վաւերացում, ատենագրութեան շարահիստութիւնը վերապահելով իրեն:

գ.- Վերջին նիստի ատենագրութեան վաւերացումը կը վստահուի դիւանին (կամ ալ՝ դիւանին եւ նորընտիր վարչութեան):

307. 174 (ը.կ. 264).- Դիւանը իր մօտ կը կեդրոնացնէ եւ նորընտիր վարչութեան կը փոխանցէ ժողովին վերաբերող բոլոր թղթածրարներն ու արձանագրութիւնները՝ տեղեկագիր, հաշուեկշիռ, ատենագրութիւն, զեկուցագիր, եւ այլն:

307. 175 (ը.կ. 265).- Դիւանը կը պատրաստէ ժողովի կողմէ ընտրուած վարչականներու, ներկայացուցիչներու կամ պատգամաւորներու հաստատագիրները եւ լիազօրագիրները՝ ուղղուած համապատասխան գերատղաց վարչութիւններու եւ կամ ժողովներու՝

ա.- Մասնաճիւղի Վարչութեան ընտրութիւն՝ հաստատագիր ողղուած Շրջանային Վարչութեան:

բ.- Մասնաճիւղի ներկայացուցիչ՝ լիազօրագիր ողղուած Շրջանային ներկայացուցչական ժողովին:

գ.- Մեկուսի Շրջանի Վարչութիւն եւ Շրջանային Վարչութիւն՝ հաստատագիր ողղուած Կեդրոնական Վարչութեան:

դ.- Մեկուսի Շրջանի եւ Շրջանի պատգամաւորներ՝ լիազօրագիր ողղուած Պատգամաւորական Ընդհանուր ժողովին:

307. 176 (ը.կ. 266).- Ժողովի փակումէն ետք, դիւանը նիստի կը հրաւիրէ նորընտիր վարչութիւնը՝ կազմելու համար իր դիւանը:

Ժողովին դիւանը նորընտիր վարչութեան կը փոխանցէ իրեն մօտ գտնուող ժողովին վերաբերող ամէն տեսակի արձանագրութիւն եւ թղթածրար:

Ծանօթ՝ Վարչութեան դիւանի կազմութեան անկարելիութեան պարագային, նորընտիր վարչութեան ներկայ անդամները կը նշանակեն ներկայացուցիչ մը, որուն պարտականութիւնն է ամէնէն կարճ ժամանակամիջոցի մէջ նիստի հրաւիրել նորընտիր վարչութիւնը՝ կազմելու իր դիւանը:

Դիւանի կազմութենէն ետք կը կատարուի փոխանցում՝ շրջանաւարտ եւ նորընտիր վարչութիւններու միջեւ:

## Ժողովի Օրինականութիւն

ՅՕԴ. 177 (ը.կ. 267).- Ժողովի օրինականութիւնը ճշդուած է **Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ցրագիր-Կանոնագիրով**:

ա.- Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով (ը.կ. ՅՕԴ. 18)

բ.- Մեկուսի Անդամական Ժողով (ը.կ. ՅՕԴ. 28)

գ.- Շրջանային Ներկայացուցչական Ժողով (ը.կ. ՅՕԴ. 31)

դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով (ը.կ. ՅՕԴ. 49)

ՅՕԴ. 178 (ը.կ. 268).- Որեւէ որոշումի բոււարկութեան համար, անհրաժեշտ է ժողովի պարզ մեծամասնութեան ներկայութիւնը:

## Օրակարգ

ՅՕԴ. 179 (ը.կ. 269).- Ժողովի օրակարգը նախապէս ճշդուած կ'ըլլայ ժողովի հրաւիրած վարչութեան կողմէ: Ժողովի դիւանը կրնայ փոփոխութիւն մտցնել օրակարգի դասաւորումին մէջ: Եթէ ժողովական մը փոփոխութեան դէմ առարկէ եւ իր առարկութիւնը երկրորդուի, դիւանը պարտաւոր է փոփոխութեան իր առաջարկը դնել ձեռամբարձ բոււարկութեան: Փոփոխութիւնը կը կատարուի ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Օրակարգի դասաւորման փոփոխութիւն կրնայ առաջարկել նաեւ ժողովական մը: Փոփոխութիւնը կը կատարուի, եթէ դիւանը համաձայն է եւ անոր դէմ առարկող չկայ: Երկրորդուած առարկութեան պարագային, փոփոխութեան առաջարկը կը դրուի բոււարկութեան: Նոյնպէս, բոււարկութեան կը դրուի դիւանին կողմէ մերժուած եւ սակայն երկրորդուած փոփոխութեան որեւէ առաջարկ:

ՅՕԴ. 180 (ը.կ. 270).- Նոր Վարչութեան, ներկայացուցիչներու եւ պատգամաւորներու ընտրութիւնները կը կազմեն օրակարգի վերջին կէտը, զոր կարելի չէ առաջ բերել:

ՅՕԴ. 181 (ը.կ. 271).- Օրակարգի վրայ նոր կէտ մը աւելցնելու առաջարկ կրնայ ներկայացուիլ դիւանին կամ ժողովականի մը կողմէ: Յաւելումը կը կատարուի, երբ դիւանին առաջարկը կամ ժողովականին երկրորդուած առաջարկը ձեռամբարձ բոււարկութեամբ կը ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

ՅՕԴ. 182 (ը.կ. 272).- Ոչ մէկ ձեւով կարելի է օրակարգի վրայ աւելցնել պաշտօնավարող վարչութեան հաշուեքննութիւնը եւ նոր վարչութեան մը ընտրութիւնը, երբ այս կէտերը նախապէս չեն դրուած օրակարգի վրայ, այսինքն՝ երբ ժողովը վարչութեան հաշուետուութեան եւ նոր վարչութեան ընտրութեան ժողով մը չէ:

ՅՕԴ. 183 (ը.կ. 273).- Ժողովականները իրաւունք չունին պաշտօնավարող վարչութեան գործունեութիւնը քննադատելու կամ անոր մասին քննադատական արտայայտութիւն ընելու այն ժողովներուն, որոնց օրակարգին վրայ վարչութեան հաշուետուութեան կէտը չէ ճշդուած: Ժողովականները կրնան լուսաբանական հարցումներ ուղղել եւ ընել առաջարկներ ու թելադրանքներ:

## **Ժողովական Ընթացք՝ Ձայն Առնել Եւ Խօսիլ**

30Դ. 184 (ը.կ. 274).- Ժողովական մը խօսելու համար ձայն կ'ուզէ դիւանէն եւ խօսիլ կը սկսի, երբ ատենապետը ձայն տայ իրեն՝ անմիջապէս կամ ըստ արձանագրութեան կարգին:

30Դ. 185 (ը.կ. 275).- Խօսք առնող ժողովականը իր խօսքը կ'ուղղէ դիւանին:

30Դ. 186 (ը.կ. 276).- Ոչ մէկ ժողովական կրնայ ընդմիջել խօսող ժողովական մը:

30Դ. 187 (ը.կ. 277).- Երբ բազմաթիւ են ձայն ուզող ժողովականները, անոնց անունները կարգով կ'արձանագրուին դիւանին կողմէ: Երբ այլեւս ձայն ուզող չկայ, ատենապետը փակուած կը յայտարարէ ձայն ուզողներու ցանկը եւ նոր անուններ չեն արձանագրուիր: Դիւանը կրնայ, նոյն ձեւով, ձայն ուզողներու երկրորդ ցանկի մը կազմութեան առիթ տալ: Երրորդ ցանկի մը առիթ կը տրուի դիւանին կողմէ կամ ժողովականի մը երկրորդուած եւ քուէարկուած առաջարկով: Նոյն ժողովականը կրնայ արձանագրուիլ իւրաքանչիւր ցանկին: Դիւանը կրնայ ժամանակի սահմանափակում կատարել. օրինակ՝ առաջին ցանկին համար խօսողներուն տրամադրելով 15 վայրկեան, երկրորդին՝ 7, երրորդին՝ 5:

## **Խօսքի Տեսակներ**

30Դ. 188 (ը.կ. 278).- Կան խօսքի հետեւեալ տեսակները.-

- ա.- Լուսաբանական հարցում,
- բ.- Ըստ ելութեան արտայայտութիւն,
- գ.- Առաջարկ,
- դ.- Ըստ կարգի արտայայտութիւն:

### *ԼՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ*

30Դ. 189 (ը.կ. 279).- Լուսաբանական հարցում կ'ուղղուի հաշուետու վարչութեան գործունեութեան շուրջ եւ հարցի մը քննութեան կամ առաջարկի մը առիթով:

ա.- Հաշուետու վարչութեան գործունեութեան շուրջ եւ նախքան անոր ըստ ելութեան քննարկումը, լուսաբանական հարցում կ'ուղղուի տեղեկագիրին մէջ անհասկնալի կամ մութ մնացած կետի մը պարզաբանումին կամ յանելեալ լուսաբանութեան համար: Լուսաբանական հարցում մը չի կրնար գնահատանքի կամ քննադատական բնոյթ եւ շեշտ ունենալ:

Հարցումներուն կարելի է պատասխանել, լսել ետք բոլոր հարցումները կամ հարցում առ հարցում:

Վարչութիւնը կրնայ դիւանէն կարճ դադար մը ուզել՝ պատասխաններուն շուրջ խորհրդակցելու համար:

բ.- Հարցի մը կամ ներկայացուած առաջարկի մը շուրջ լուսաբանական հարցում կ'ուղղուի, ըստ այնմ կարծիք տալու կամ քուէարկելու համար:

## *ԸՍՏ ԷՈՒԹԵՎԸ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ*

307. 190 (ը.կ. 280).- Վարչության գործունեության շուրջ ըստ էության արտայայտուող ժողովականը կրնայ հաշիւ պահանջել վարչութենէն, ընել իր հիմնաւորեալ գնահատանքը կամ քննադատութիւնը:

Վարչութիւնը կը պատասխանէ քննադատութիւններուն:

Բանաձեւի յանձնախումբը կը հետեւի ըստ էության արտայայտութիւններուն եւ վարչութեան պատասխաններուն, ըստ այնմ խմբագրելու համար հաշուետու վարչութեան գործունեության շուրջ քուէարկութեան դրուելիք գնահատումի բանաձեւը:

## *ԱՌԱՋԱՐԿ*

307. 191 (ը.կ. 281).- Առաջարկ մը նկատի կ'առնուի եւ քննութեան կ'ենթարկուի միայն այն պարագային, երբ երկրորդուած է այլ ժողովականի մը կողմէ: Յանձնախումբի մը ներկայացուցած առաջարկը պէտք չունի երկրորդուելու:

307. 192 (ը.կ. 282).- Առաջարկի մը քննարկումի աւարտէն ետք, ատենապետը առիթ կու տայ այլ առաջարկի մը քննարկումին:

307. 193 (ը.կ. 283).- Առաջարկի մը քննութեան ընթացքին, ժողովական մը կրնայ ներկայացուած առաջարկին մէջ բարեփոխութիւն առաջարկել: Եթէ առաջարկը ներկայացուցած ժողովականը ընդունի բարեփոխութիւնը, առաջարկը կը քննուի բարեփոխուած ձեւով: Եթէ չընդունի, բարեփոխութիւն առաջարկող ժողովականը բարեփոխութեան ենթարկած իր առաջարկը կրնայ իբրեւ նոր առաջարկ ներկայացնել: Նոյնպէս, երբ ժողովական մը համաձայն չէ բարեփոխութեան, որուն համաձայն գտնուած է առաջարկ բերողը, կրնայ սկզբնական առաջարկը ներկայացնել իբրեւ իրը:

## *ԸՍՏ ԿՎՐԳԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ*

307. 194 (ը.կ. 284).- Ժողովական մը «ըստ կարգի» ձայն կ'ուզէ, դիւանին ուշադրութեան յանձնելու համար դիւանին կամ ժողովականի մը կողմէ կատարուած ժողովական շեղում մը կամ վրիպում մը, որպէսզի վերահաստատուի ժողովական կարգը:

«Ըստ կարգի» ձայն ուզողը նախապատուութիւն ունի: Երբ ժողովական մը ձայն կ'ուզէ «ըստ կարգի» ըսելով, ատենապետը կ'ընդմիջէ իր կամ ժողովականի մը խօսքը՝ լսելու համար «ըստ կարգի» արտայայտուիլի ուզողը: Ատենապետը երբ իրաւացի գտնէ «ըստ կարգի» մատնանշումը, ընթացք կու տայ անոր: Ի պահանջեալ հարկին՝ մատնանշումի մասին որոշում տալէ առաջ կը դիմէ դիւանի միւս անդամներուն կամ նոյնիսկ ժողովի կարծիքին:

## Տրուած Որոշումի մը Վերաքննութիւնը

ՅՕԴ. 195 (ը.կ. 285).- ժողովին կողմէ տրուած որոշումի մը վերաքննութեան առաջարկը կրնայ ներկայացնել որոշումին ի նպաստ քուէարկած ժողովական մը միայն: Նոյնպէս՝ հարկ է, որ վերաքննութեան առաջարկը երկրորդողը ըլլայ որոշումին ի նպաստ քուէարկած ժողովական մը: Երբ այս ձեւով երկրորդուի վերաքննութեան առաջարկը, ձայն կը տրուի երկու թեր եւ երկու դէմ արտայայտուողներու, որոնք իրենց տեսակետը կը պարզեն առանց նոր քննարկումներու:

Տրուած որոշումը վերաքննութեան կ'ենթարկուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Փոխարինող որոշումը կը տրուի ձայներու պարզ մեծամասնութեամբ եւ, հետեւաբար, կը բեկանուի նախկին որոշումը: Երբ կարելի չ'ըլլար վերաքննուած որոշումը փոխարինող որոշում մը տալ ձայներու պարզ մեծամասնութեամբ, նախկին որոշումը կը մնայ ի գօրու:

## Տրուած Որոշումի մը Բեկանումը

ՅՕԴ. 196 (ը.կ. 286).- Նոյն ձեւով՝ տրուած որոշումի մը բեկանումը կարելի է առաջարկել՝ առանց փոխարինող նոր որոշումի մը: Անհրաժեշտ է, որ բեկանումի առաջարկը ներկայացնեն եւ զայն երկրորդեն որոշումին ի նմանաստ քուէարկած երկու տարբեր ժողովականներ: Տրուած որոշումը կը բեկանուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

## Քուէարկութիւն

ՅՕԴ. 197 (ը.կ. 287).- ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէարկութեամբ:

Քուէարկութեան երկու ձեւ կայ՝

- **Ձեռամբարձ քուէարկութիւն,**
- **Գաղտնի քուէարկութիւն:**

ա.- **Ձեռամբարձ քուէարկութիւն** կը կատարուի ձեռքերու բարձրացումով, ընթացիկ հարցերու համար, ինչպէս՝ ստենագրութեան վաւերացում, օրակարգի փոփոխութիւն, յանձնախումբերու ընտրութիւն, բանաձեւի ընտրութիւն, ժողովական ընթացքին շուրջ ճշդում, եւայլն:

Ընդհանուր ձեւով որոշումները եւս կը տրուին ձեռամբարձ քուէարկութեամբ:

բ.- **Գաղտնի քուէարկութիւն** կը կատարուի դիւանին կողմէ բաժնուած թղթիկներուն վրայ կատարուած արձանագրութեամբ: Գաղտնի քուէարկութեան պարագաները ճշդուած են **Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրով**, ինչպէս՝ վարչութիւններու ընտրութիւն, ներկայացուցիչներու եւ պատգամաւորներու ընտրութիւն:

Ժողովական մը, սակայն, ձեռամբարձ քուէարկութեան փոխարէն կրնայ գաղտնի քուէարկութիւն առաջարկել: Առաջարկը երբ երկրորդուի, կը դուրսի ձեռամբարձ քուէարկութեան եւ կը գործադրուի, երբ ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

## **Թեր, Դեմ, Ձեռնպահ**

ՅՕԴ. 198 (ը.կ. 288).- Առաջարկի մը քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ թեր կամ դեմ քուէարկել եւ կամ չմասնակցիլ քուէարկութեան՝ մնալով ձեռնպահ:

Գաղտնի քուէարկութեան ատեն ձեռնպահ ժողովականը իր քուէաթուղջը ճերմակ կը վերադարձնէ:

Անձերու ընտրութեան ատեն, ժողովականը կը քուէարկէ ի նպաստ իր նախընտրած թեկնածուներուն, գաղտնի քուէարկութեան ատեն կը գրէ անոնց անունները կամ կը մնայ ձեռնպահ:

Ծանօթ՝ Երբ ձեռնպահ մնացողներու թիւը քուէարկողներու պարզ մեծամասնութիւնը կը կազմէ, քուէարկութեան դրուած առաջարկը կը վերաքննուի ժողովին կողմէ:

## **Մեծամասնութիւն**

ՅՕԴ. 199 (ը.կ. 289).- Ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէներու մեծամասնութեամբ:

ՅՕԴ. 200 (ը.կ. 290).- Կայ երկու տեսակ մեծամասնութիւն՝ պարզ մեծամասնութիւն եւ երկու երրորդի մեծամասնութիւն:

Քուէներուն կեսէն մէկ կամ կոտորակ մը աւելին կը կազմէ պարզ մեծամասնութիւն:

Քուէներուն երկու երրորդը կը կազմէ երկու երրորդի մեծամասնութիւն եւ պարզ մեծամասնութիւն:

Ծանօթ՝

ա.- Քուէներու ստուգման ատեն քուէարկողներու ընդհանուր թիւէն կը զեղչուին ձեռնպահ կամ ճերմակ քուէները եւ զեղչուած թիւին վրայ կը հաշուի պարզ կամ երկու երրորդի մեծամասնութիւնը (բացի ը.կ. Յօդ. 288-ի ծանօթ բաժինէն):

բ.- Քուէաթուղջ մը, որ ընտրելի անձերու թիւէն աւելի անուն կը կրէ, ամբողջութեամբ չեղեալ կը համարուի եւ կը նկատուի ճերմակ քուէ:

Ձեռամբարձ քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ քուէարկել միայն մէկ անգամ՝ թեր կամ դեմ, կամ մնալ ձեռնպահ: Անձերու ընտրութեան ատեն կրնայ քուէարկել այնքան անգամ, որքան ընտրելիներ կան, կամ մնալ ձեռնպահ:

գ.- Ընտրուած կը նկատուին կանոնագրային մեծամասնութեամբ քուէ ստացողները:

## **Ժողովական Կարգապահութիւն**

ՅՕԴ. 201 (ը.կ. 291).- Բոլոր ժողովականները պարտին յարգել ժողովական կանոնները:

ՅՕԴ. 202 (ը.կ. 292).- Ատենապետը, երբ կը վարէ ժողովը, պարտի վեր մնալ ժողովի վեճերէն:

ՅՕԴ. 203 (ը.կ. 293).- Ժողովական մը կրնայ ատենապետին թերացումը մատնանշել ժողովին: Կրկնութեան պարագային, կարելի է թերացող ատենապետին փոփոխութիւնը առաջարկել: Երբ առաջարկը երկրորդուի, ինդրոյ առարկայ ատենապետը իր տեղը կու տայ միւս ատենապետին (ատենապետի չգոյութեան պարագային՝ ատենադպիրին), որ առանց քննարկումի փոփոխութեան առաջարկը կը դնէ ձեռամբարձ քուէարկութեան: Երբ պարզ մեծամասնութեամբ ատենապետի փոփոխութիւն որոշուի, կ'ընտրուի նորը եւ նախկինը կը դառնայ պարզ ժողովական:

ՅՕԴ. 204 (ը.կ. 294).- Ատենապետը իրաւունք ունի ժողովական մը կարգի հրաւիրելու՝ պահելու համար ժողովի կանոնաւոր ընթացքը եւ կարգը:

Ի պահանջեալ հարկին, ատենապետը կրնայ ժողովականի մը նկատմամբ ընել հետեւեալ կարգապահական տնօրինումները՝

ա.- Ազդարարութիւն,

բ.- Չայնի իրաւունքէ զրկում հարցի մը քննութեան ընթացքին,

գ.- Չայնի իրաւունքէ զրկում որոշ ժամանակամիջոցի մը համար,

դ.- Չայնի իրաւունքէ զրկում մինչեւ նիստի աւարտը:

Ծանօթ՝ Ենթակայ ժողովականը «Ըստ կարգի» ձայն առնելով՝ կրնայ բողոքել եւ պահանջել, որ դիմուի ժողովի կարծիքին: Ժողովը իր կարծիքը կու տայ ձեռամբարձ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

ՅՕԴ. 205 (ը.կ. 295).- Ատենապետին պահանջով կամ երկրորդուած առաջարկի մը հիմամբ, երկու երրորդի մեծամասնութեամբ՝ կարելի է ժողովէն հեռացնել անուղղայ կամ հակամիութենական ժողովական մը:

## **Ժողովի Փակում**

ՅՕԴ. 206 (ը.կ. 296).- Ատենապետը կը փակէ ժողովը, երբ աւարտած է օրակարգի վրայ գտնուող բոլոր հարցերուն քննութիւնը եւ, ընտրութեան պարագային՝ ընտրուած են վարչականներ, ներկայացուցիչներ կամ պատգամաւորներ:

Երբ երկրորդուած առարկութիւն կայ ժողովը փակելու դիւանի կարգադրութեան դեմ, կը դիմուի ժողովին, որ ձեռամբարձ եւ պարզ մեծամասնութեամբ կը յայտնէ իր կամքը:

Նոյնպէս, երբ, հակառակ դիւանի կարծիքին, երկրորդուած առաջարկ կայ փակելու ժողովը, նկատելով որ սպառած է օրակարգի բոլոր կէտերուն լուծումը՝ Նոյն ձեւով կը դիմուի ժողովի կամքին:

## **Ժողովի Առկախում Եւ Լուծում**

ՅՕԴ. 207 (ը.կ. 297).- Նուիրապետական կարգով գերադաս ժողով մը, գերադաս վարչութիւն մը կամ անոր լիազօր ներկայացուցիչը կրնայ առկախել եւ կամ լուծուած յայտարարել իրմէ սորադաս ժողով մը, երբ որոշումը արդարացնող պատճառներ կան:



## **Բ.- ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **Վարչություններ**

ՅՕԴ. 208 (ը.կ. 298).- Զ.Մ.Ը.Մ.ի վարչությունները գործադիր մարմիններ են, որոնք կը վարեն միութեան գործերը եւ կը հսկեն իրենց ենթակայ կազմերու եւ ժողովներու գործունեութեան վրայ, իւրաքանչիւրը՝ կանոնագրով ճշդուած իր սահմաններուն մէջ:

ՅՕԴ. 209 (ը.կ. 299).- Զ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ վարչությունները՝ ընտրուած համապատասխան ժողովներու կողմէ՝

ա.- Մասնաճիւղի Վարչութիւն՝ ընտրուած Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ:

բ.- Մեկուսի Շրջանի Վարչութիւն՝ ընտրուած Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ:

գ.- Շրջանային Վարչութիւն՝ ընտրուած Շրջանային Ներկայացուցչական ժողովին կողմէ:

դ.- Կեդրոնական Վարչութիւն՝ ընտրուած Զ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ:

### **Նուիրապետական Կարգ**

ՅՕԴ. 210 (ը.կ. 300).- Զ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ նուիրապետական կարգը՝

ա.- Մասնաճիւղի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է իր շրջանի Շրջանային Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

բ.- Մեկուսի Շրջանի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կեդրոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

գ.- Շրջանային Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կեդրոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

ՅՕԴ. 211 (ը.կ. 301).- ա.- Շրջանային Վարչութիւնը գերադաս է իր շրջանի որեւէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովէն:

բ.- Կեդրոնական Վարչութիւնը գերադաս է Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողովէն եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովէն:

ՅՕԴ. 212 (ը.կ. 302).- Վարչությունները հաւաքաբար հաշուետու են գիրենք ընտրող ժողովներուն, իրենց բոլոր գործերուն համար:

### **Նորընտիր Վարչութեան Վաւերացում**

ՅՕԴ. 213 (ը.կ. 303).- Նորընտիր վարչութիւնը իր պարտականութիւնները կը ստանձնէ ընտրութենէն անմիջապէս տեղ:

ՅՕԴ. 214 (ը.կ. 304).- Նորընտիր վարչութիւնը կը վաւերացուի իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կողմէ:

30Դ. 215 (ը.կ. 305).- Նորընտիր վարչութեան վաւերացումը կը կատարուի հետեւեալ ձեւով՝

ա.- Վարչութիւնը ընտրած ժողովին դիւանը իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կ'ուղղէ վարչական նոր կազմին օրինաւոր ընտրութիւնը հաստատող նամակ մը:

բ.- Նորընտիր վարչութիւնը, իր դիւանը կազմելէ անմիջապէս ետք, նամակով մը գերադաս վարչութեան կը տեղեկացնէ իր ընտրութեան արդիւնքը եւ իր դիւանին կազմը՝ խնդրելով անոր վաւերացումը:

գ.- Նորընտիր վարչութիւնը գերադաս վարչութեան կը փոխանցէ նաեւ զինք ընտրած ժողովին վերաբերող արձանագրութիւններուն եւ շրջանաւարտ վարչութեան տեղեկագիրներուն բոլոր պատճենները:

Ծանօթ՝ Նորընտիր վարչութիւնը իր վաւերացումը խնդրող նամակը կ'ուղարկէ անմիջապէս՝ առանց սպասելու ժողովի դիւանի հաստատագրիին եւ միւս գրութիւններուն, որոնք կը փոխանցուին հետագային, երբ ի ձեռին ունենայ զանոնք:

## **Վարչութեան Դիւան**

30Դ. 216 (ը.կ. 306).- Վարչութիւնը կ'ունենայ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ զանձապահ:

Վարչութիւնը կ'ունենայ նաեւ փոխ ատենապետ, փոխ ատենադպիր, հաշուապահ եւ, ի պահանջեալ հարկին՝ գոյքապահ մը, որոնք մաս չեն կազմեր դիւանին:

Վարչութիւնը կրնայ ունենալ երկու ատենադպիր, աշխատանքի յստակ բաժանումով՝ ատենագրութիւն, շրջաբերական, նամակագրութիւն, օտար լեզուով գրութիւն, եւայլն:

Երկու ատենադպիրներն ալ մաս կը կազմեն դիւանին:

Մէկ ատենադպիրի պարագային, վարչութիւնը կրնայ ունենալ փոխ ատենադպիր մը, որ մաս չի կազմեր դիւանին:

Ատենապետին եւ ատենադպիրին բացակայութեան՝ փոխ ատենապետն ու փոխ ատենադպիրը կը կատարեն անոնց պաշտօնը եւ այս ձեւով կը մասնակցին դիւանի նիստին:

## **Դիւանի Պաշտօնն ու Պարտականութիւնը**

30Դ. 217 (ը.կ. 307).- Դիւանը իրմէ անմիջապէս գերադաս վարչութեան կը փոխանցէ վաւերացուած ատենագրութիւնը եւ իր առաքած շրջաբերականէն օրինակ մը, որպէսզի ան բայլ առ բայլ հետեւի վարչութեան գործունեութեան:

30Դ. 218 (ը.կ. 308).- Դիւանը կը պատրաստ վարչական նիստին օրակարգը:

### **ԱՏԵՆԱՊԵՏ**

30Դ. 219 (ը.կ. 309).- Ատենապետը՝

ա.- Կը բանայ եւ կը վարէ վարչական նիստերը:

բ.- Չայն կու տայ խօսք ուզող վարչականներուն:

գ.- Կը պահէ ժողովին կարգն ու կանոնը:

դ.- Կը փակէ նիստը:

30Գ. 220 (ը.կ. 310).- Ատենապետը վարչութեան ներկայացուցիչն է եւ իր այս հանգամանքով՝

ա.- Կը հետեւի վարչութեան որոշումներու գործադրութեան եւ, ի պահանջեալ հարկին, մղում կու տայ անոնց:

բ.- Ստիպողական պարագային, Նիստէ դուրս կը կատարէ վարչական ընթացիկ կարգադրութիւններ, որոնց համար հաշիւ կու տայ վարչութեան:

գ.- Վարչութիւնը կը հրաւիրէ բացառիկ Նիստի:

դ.- Կը տանի վարչութեան յարաբերական գործը, բացի այն մարզերէն ներս, ուր վարչութիւնը ունի իր ներկայացուցիչը:

ե.- Կը ստորագրէ վարչական Նիստերու վաւերացուած ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

## ԱՏԵՆԱԴՊԻՐ(ՆԵՐ)

30Գ. 221 (ը.կ. 311).- Ատենադպիրը՝

ա.- Կը պահէ Նիստի ատենագրութիւնը: Ատենագրութեան մէջ կ'արձանագրէ Նիստին կարգաթիւը, գումարման թուականն ու վայրը, ներկաներուն եւ բանաւոր բացականերուն անունները:

Ատենագրութեան մէջ կ'անցընէ նաեւ ստացուած նամակներուն բովանդակութիւնը՝ իրենց ստացման թուականով եւ կարգաթիւով, գրուելիք նամակներուն եւ շրջաբերականներուն բովանդակութիւնը, իրագործուած աշխատանքներուն զեկուցումը:

Նոյնպէս, հարցի մը քննութեան ընթացքին արտայայտուած միտքերը, տեսակէտները, եղած առաջարկները եւ առարկութիւնները՝ իրենց հիմնաւորումներով եւ, ի պահանջեալ հարկին՝ առաջարկը ընող կամ առարկող վարչականներուն անուններով:

Յստակօրէն կ'արձանագրէ նաեւ առնուած որոշումները եւ յանձնուած պարտականութիւնները:

բ.- Յաջորդ Նիստին ատենադպիրը պատրաստ վիճակի մէջ կը ներկայացնէ ատենագրութիւնը՝ առ ի վաւերացում:

գ.- Կը ստորագրէ վարչական Նիստերու ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

Ծանօթ՝ ա.- Նոյն Նիստի աւարտին, վարչականներու փափաքով, ատենադպիրը կը ներկայացնէ Նիստին ատենագրութեան սեւագրութիւնը կամ հոն տեղ գտած կէտերը:

բ.- Վարչութեան որոշումով՝ կը պահէ որոշումներու տետրակը, ուր կ'արձանագրուին առնուած որոշումները՝ իրենց թուականներով եւ զանոնք գործադրողներու անուններով:

գ.- Վարչութեան վերաբերող բոլոր գրութիւնները կը դասաւորէ յատուկ թղթածրարներու մէջ եւ կը պահէ վարչութեան փոխանցուած արխիւները:

դ.- Կը պատրաստէ վարչութեան շրջաբերականները, նամակները եւ զանազան գրութիւնները:

## ԳԱՆՁԱՊԱՅ

30Գ. 222 (ը.կ. 312).- Գանձապահը՝

ա.- Կը կատարէ վարչութեան գանձումներն ու վճարումները՝ համապատասխան ստացագիրով: Կը կատարէ նաեւ դրամատնային գործողութիւնները եւ տեղեակ կը պահէ վարչութիւնը:

բ.- Կը հետապնդէ գանձումները:

գ.- Օրը-օրին կ'արձանագրէ Նիւթական գործառնութիւնները՝ հաշուական տոմարի մուտքի եւ ելքի բաժիններուն մէջ:

## ՀԱՇՈՒԿՊԱՀ

ՅՕԴ. 223 (ը.կ. 313).- Հաշուապահը՝

ա.- Կը հետեւի գանձապահի նիւթական գործառնութիւններուն եւ հաշուապահութեան:

բ.- Կանոնաւոր կերպով կը պահէ հաշուական տոմարները՝ ըստ որդեգրուած հաշուապահական դրութեան:

գ.- Պարբերաբար վարչութեան կը ներկայացնէ զեկուցում՝ նիւթական եւ տնտեսական կացութեան մասին:

## ԳՈՅՔԱՊԱՀ

ՅՕԴ. 224 (ը.կ. 314).- Գոյթապահը՝

ա.- Կը պահէ վարչութեան գոյթերը եւ անոնց լրիւ ցանկը:

բ.- Իր մօտ կը կեդրոնացնէ նաեւ վարչութեան ենթակայ միաւորներու ունեցած կարեւոր գոյթերուն ցանկը:

## ՊԱԾՏՕՆԵԱՅ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՅՕԴ. 225 (ը.կ. 315).- Կեդրոնական Վարչութիւնը կամ Շրջանային Վարչութիւնը կրնայ ունենալ պաշտօնեայ քարտուղար մը, որ կ'օգնէ ատենապետին եւ դիւանի աշխատակներուն: Վարչութեան արտօնութեամբ, ան կրնայ մասնակցիլ վարչութեան եւ դիւանի նիստերուն, առանց ձայն ունենալու:

Ծանօթ 1.- Կեդրոնական Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, առանց ձայն ունենալու:

Ծանօթ 2.- Շրջանային Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին, առանց ձայն ունենալու:

## Վարչական Նիստ

ՅՕԴ. 226 (ը.կ. 316).- Վարչութիւնը կը գործէ՝ գումարելով հերթական նիստեր: Նիստերուն կը քննուին միութեան վերաբերող հարցեր, կը լսուին զեկուցումներ, կը կարդացուին ստացուած նամակներ եւ գրութիւններ, կը նշանակուին պատասխանատու անձեր եւ կազմեր, կ'առնուին որոշումներ, եւայլն:

ՅՕԴ. 227 (ը.կ. 317).- Վարչութեան գործը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Ս.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին, Միութեան ընդհանուր ուղեգիծին, Հ.Ս.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն, ինչպէս նաեւ՝ զինք ընտրած Ժողովին, գերադաս Ժողովին եւ գերադաս վարչութիւններուն որոշումներուն:

Վարչութեան գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրութիւններուն, Ժողովական եւ վարչական կանոններուն, գերադաս Ժողովներու եւ վարչութիւններու որոշումներուն:

Այլ մասնաւոր՝ վարչութեան գործը եւ գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Ս.Ը.Մ.ի ոգիին:

ՅՕԴ. 228 (ը.կ. 318).- Վարչութիւնը կ'որոշէ իր հերթական նիստերու գումարման օրը, ժամը, վայրը եւ տեղութիւնը:

ՅՕԴ. 229 (ը.կ. 319).- Վարչականները կրնան դիւանի ներկայացուցած օրակարգին վրայ աւելցնել իւր կէտերը:

30Դ. 230 (ը.կ. 320).- Օրակարգին մնայուն կետերն են՝

- Նախորդ Նիստի ատենագրության ընթերցում եւ վաւերացում,
- Ատենագրութենէն բխած հարցեր,
- Կատարուած աշխատանքներու շուրջ զեկուցումներ,
- Գերադաս վարչութիւններէ ստացուած նամակներ եւ շրջաբերականներ:

30Դ. 231 (ը.կ. 321).- Նիստը օրինաւոր է, երբ ներկայ է վարչականներուն մեծամասնութիւնը:

30Դ. 232 (ը.կ. 322).- Վարչութեան որոշումները կ'առնուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

30Դ. 233 (ը.կ. 323).- Առնուած որոշում մը կարելի է վերաքննութեան ենթարկել՝ ձայներու երկու երրորդով: Ձայն փոխարինող որոշումը կ'առնուի պարզ մեծամասնութեամբ:

30Դ. 234 (ը.կ. 324).- Ժողովական մը խօսք կ'առնէ ատենապետէն ձայն ստանալէ ետք: Այլ ժողովական մը չի կրնար ընդմիջում կատարել: Շեղումի պարագային, ատենապետը զայն կրնայ կարգի հրաւիրել, իսկ ժողովական մը կրնայ «ըստ կարգի» յիշեցում կատարել:

## Դիւանի Նիստ

30Դ. 235 (ը.կ. 325).- Վարչութեան դիւանը կրնայ Նիստ գումարել՝

ա.- Կանոնաւոր հերթականութեամբ,

բ.- Վարչականներու մեծամասնութեան բացակայութեան:

30Դ. 236 (ը.կ. 326).- Դիւանի Նիստերուն հիմնական որոշումներ կարելի չէ առնել: Դիւանի հերթական Նիստերը կը ծառայեն պատրաստելու վարչական Նիստերը: Այս Նիստերուն կը կարդացուին ենթակայ կազմերու ատենագրութիւնները, զեկուցումները եւ գտումի կ'ենթարկուին ստացուած գրութիւններն ու նամակները:

**Ֆ. Մ. Է. Մ. Ր. ԿԱՌԱՅԱԼ**

